

# ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՂԱԿԻ ՆԵՐՂՈՒՄՆԵՐԸ (ՕՌՆ) ԴՅ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ա. Ե. ՄԱՐԿՈՍՅԱՆ

## ՕՌՆ-ի անհրաժեշտությունը ԴԴ տնտեսության ներկա փուլում

Հայաստանի տնտեսության մեջ ձեռք բերված մակրոտնտեսական կայունությունից և կառուցվածքային բարեփոխումներից հետո տնտեսության հետագա զարգացման համար կառավարությունը շեշտադրում է համախառն առաջարկի խթանումը: Իսկ առաջարկի կըտրուկ թռիչքային մեծացումը ներկա փուլում դժվարին խնդիր է, քանի որ տնային տնտեսությունների խնայողությունները սակավ են, իսկ տեղական ձեռնարկությունները գրեթե զուրկ են ֆինանսական միջոցներից: Այս ամենը պայմանավորում է տեղական ներդրումների ցածր մակարդակը և կարևորում օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՌՆ)՝ տնտեսության կտրուկ վերընթաց զարգացման, ինչպես նաև մրցունակ ձեռնարկատիրական դաշտ ստեղծելու համար:

ԴԴ տնտեսությունում ՕՌՆ-ը ունեն որոշակի գերակայություն այլ ֆինանսական հոսքերի նկատմամբ: Նման միտում առկա է նաև համաշխարհային տնտեսության մեջ: Այսպես, համաձայն համաշխարհային միտումների<sup>1</sup> օտարերկրյա մասնավոր ներդրումների՝ հատկապես ՕՌՆ-ի ներհոսքը զարգացող երկրներ 1960-ական թթ. սկսած աճել է և այժմ աճման միտում ունի, իսկ դրամաշնորհներն ու՝ փոխառությունները՝ նվազման: Սա բացատրվում է ՕՌՆ-ի՝ այլ կապիտալ հոսքերի նկատմամբ շատ առավելություններ ունենալու հանգամանքով, ինչպես նաև այն բանով, որ համարվում են տնտեսությունների գլոբալիզացիայի հիմնական բնութագրիչը և տնտեսական զարգացման ռազմավարության կարևոր բաղկացուցիչը: ՕՌՆ-ի առանձնահատուկ բնույթն այն է, որ կապիտալ ռեսուրսների հետ մեկտեղ օտարերկրյա ներդրումները բերում են նաև զարգացած տեխնոլոգիաներ, մտավոր սեփականություն, մենեջմենտային ունակություններ, նուր-հաու, ինչպես նաև՝ մուտքի հնարավորության այլ շուկաներ: Բացի այդ, ՕՌՆ-ները ֆինանսավորման ավելի ապահով միջոցներ են, քան անտոկոս վարկերը, և նրանց միջոցով ի հայտ են գալիս տարածման էֆեկտներ:

## ՕՌՆ-ի ներկա վիճակը Հայաստանում


ՕՌՆ-ի գումարային ծավալները: Անցման շրջանի երկրներում ՕՌՆ-ի ծավալները տարեցտարի աճում են: Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում ՕՌՆ-ի հոսքը 90-ականներին հասավ ռեկորդային մակարդակի, որը բացատրվում է ոչ միայն սեփականաշնորհման ալիքով, այլ նաև տնտեսական աշխուժացմամբ (հատկապես Լեհաստանում և Չեխիայում): Իսկ նախկին Խորհրդային Միության երկրներում ներդրումների ներհոսքը սկսել է 1992-93 թթ. և աճման միտում ունի: Հայաստանին նույնպես բնորոշ է այս միտումը: Այսպես, Հայաստանում ՕՌՆ-ի գումարային ծավալը 1988-98 թթ. կազմել է մոտ 367.9 մլն ԱՄՆ դոլար<sup>2</sup>, ընդ որում դրանց մեծ մասը կատարվել է վերջին երկու տարիների ընթացքում: 1995 թ.-ին ՕՌՆ-ի ներհոսքը զննհատվել է 24.4 մլն դոլ., 1996 թ.-ին՝ 17.57 մլն դոլ., իսկ 1997-ին՝ 51,9 մլն դոլ.: 1998-ի համար կանխատեսվել էր 200 մլն դոլ., բայց ներդրումների ներհոսքը հասավ 232.4 մլն դոլ.-ի (տե՛ս գրաֆիկ 1): Սակայն եթե համեմատելու լինենք Հայաստանի

<sup>1</sup> Տե՛ս «World Investment Report 1996» (UNCTAD):


<sup>2</sup> Տե՛ս «Տնտեսական բարեփոխումների առանձնահատկություններն ու փուլերը Հայաստանում: 1991-1998 թթ. (վիճակագրական պատկեր)»: ՀՀ վիճակագրության, վերլուծությունների և պետական ռեգիստրի նախարարություն (01.01.1999 թ.):

և անցման շրջանի այլ երկրների՝ մեկ շնչին ընկնող ՕՌՆ-ի ծավալը, ապա կտեսնենք, որ Հայաստանը ամենաքիչ ՕՌՆ ընդունող երկրներից է: Այսպես, 1997 թ.-ի տվյալներով<sup>3</sup> Հայաստանում մեկ շնչին ընկնող ՕՌՆ-ի ծավալը կազմել է 13.7 դոլ., որը 15 անգամ քիչ է Հունգարիայից, մոտ 13 անգամ՝ Եստոնիայից ու Լատվիայից, 10 անգամ՝ Արդեբեյանից, 3 անգամ՝ Ռուսաստանից ու Վրաստանից (տես գրաֆիկ 2):

**Գրաֆիկ 1.** ՕՌՆ-ի ներհոսքի դինամիկան Հայաստանում




**Գրաֆիկ 2.** ՕՌՆ-ի մեկ շնչին ընկնող ներհոսքի համեմատական ծավալները (1997, դոլ.-ներով)




Այնուամենայնիվ ՕՌՆ-ի ներհոսքի հետ կապված սպասումները հուսադրող են: Այսպես՝ համաձայն ՀՀ կառավարության կանխատեսումների՝ հաջորդ երեք տարիների ընթացքում սպասվում է մոտ 1.2 մլրդ ԱՄՆ դոլարի ներդրում՝ մոր ներդրումների, վերաներդրումների և պետական խոշոր ձեռնարկությունների, ներառյալ հյուրանոցային կառույցների սեփականաշնորհման միջոցով: Բացի այդ՝ փորձագետները, որոնց թվին են պատկանում բարձրաստիճան և միջին օղակի պետական պաշտոնյաները, մասնավոր ոլորտի անկախ փորձագետները, Հայաստանում գտնվող դեսպանատները, միջազգային կազմակերպությունները, հարցման<sup>4</sup> են ենթարկվել՝ ներկայացնելու համար իրենց ընդհանուր ակնկալիքները՝ կապված Հայաստանում ՕՌՆ-ի ներհոսքի ծավալի հետ հաջորդ 2-3 տարիների համար: Պատասխանողներից ոչ մեկը չհայտարարեց, թե ակնկալում է որևէ անկում, իսկ 13%-ը նույնիսկ ՕՌՆ-ի ծավալի արագընթաց աճի ակնկալիքներ ուներ (տես գրաֆիկ 3): Մինևույն ժամանակ

**Գրաֆիկ 3.** Փորձագետների ընդհանուր պատասխանները կապված օտարերկրյա ներդրումների հետ հաջորդ 2-3 տարիների համար



**Գրաֆիկ 4.** Ավագա ներդրումային պլանները (հնարավոր է մեկից ավելի պատասխան, %-ներով)






մեկ փորձագետների 76.6%-ը ՕՌՆ-ի ներհոսքի ծավալի որոշակի աճ է ակնկալում հաջորդ 2-3 տարիների համար: Սպասումների պատկերն ավելի իրական է դառնում, երբ հաշվի է առնվում ներդրողների կարծիքը: Այսպես՝ գործող ներդրողներից շատերն արդեն ձևավորել են իրենց գործունեության զարգացման և աճի ծրագրերը: Նրանցից 67.6%-ը՝ պլանավորում է իրականացնել վերաներդրումներ՝ իրենց շահույթի հաշվին, 45.9%-ը մտադրված է ներդրել դրսից մոր կապիտալի ներգրավման միջոցով, իսկ 29.7%-ը ցանկանում է ավելացնել իր ներդրումները վարկային միջոցներ ձեռք բերելով: Միայն 5.4%-ն է, որ չի նախատեսում որևէ մոր ներդրում (տես գրաֆիկ 4): Մինևույն ժամանակ հարցված պատենցիալ ներդրողների 2/3-ը նախատեսում է մոտակա 2 տարում ներդրում կատարել Հայաստանում, որոնցից 1/3-

<sup>3</sup> Տես «Economic Survey of Europe», 1998, No 1, United Nations.  
<sup>4</sup> Տես «Հայաստանում ՕՌՆ-ին խոչընդոտող գործոնների ուսումնասիրություն» ծրագրի հաշվետվությունը, Երևան, 1999, ներկայացված ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարության, IRIS կովկասյան կենտրոնի (USAID-ի ֆինանսավորմամբ) և ՄNDP-Հայաստանի կողմից:  
<sup>5</sup> Հարցվողներին հնարավորություն է տրվել նշելու մեկից ավելի պատասխան, և արդյունքների վերլուծման ժամանակ տոկոսները ներկայացվել են կուտակային (ակումուլյատիվ) ձևով: Այս մեթոդով վերլուծության դեպքում տոկոսային գումարը հարյուր չի կազմում:

ը՝ 1 միլիոն ԱՄՆ դոլարից ավելի գումարի չափով (տես գրաֆիկ 5):


Ընդ որում՝ օտարերկրյա ներդրումների միջին ծավալը մեկ ձեռնարկության հաշվով Հայաստանում աճում է: Այդ աճը կարելի է տեսնել սկսած 1991 թ.-ից գործող ներդրող-

**Գրաֆիկ 5.** Կանոնադրյալ կապիտալի դինամիկան, **Գրաֆիկ 6.** Ուտեցնիալ ներդրումների պլանները (1993 - 1997)



ների կանոնադրյալ կապիտալի ծավալների փոփոխման մեջ: Հարցվող գործող ներդրողների 39%-ի կանոնադրյալ կապիտալի գումարային ծավալը 1997 թ.-ին արդեն կազմում էր ավելի քան 1 մլն ԱՄՆ դոլար, իսկ մյուս 39%-ի մոտ այն տատանվում էր 100000-ից մինչև 1 մլն ԱՄՆ դոլար (տես գրաֆիկ 5): Միևնույն ժամանակ պոտենցիալ ներդրողների կարծիքների վերլուծությունը ցույց տվեց, որ նրանց մոտ մեկ երրորդը նախատեսում է իրականացնել 1 մլն ԱՄՆ դոլարից ավելի ներդրումներ (այսպես, նրանց 33.3%-ը՝ 100 000-ից մինչև 1 մլն ԱՄՆ դոլար, իսկ մյուս 33.3%-ը՝ ավելի քան 1 մլն ԱՄՆ դոլար (տես գրաֆիկ 6)): Ինչպես արդեն հիշատակվել է, թե՛ գործող և թե՛ պոտենցիալ ներդրողների մեծամասնությունը նախատեսում է Հայաստանի տնտեսության մեջ համապատասխանաբար վերաներդրել կամ ներդրել որոշակի գումարներ: Ամիրաժեշտ է նշել, որ 1992-1995 թթ. համեմատությամբ նրանք պատրաստվում են մուտք գործել ավելի մեծ գումարներով:

**ՕՌԻՆ-ով ձեռնարկությունների գրանցման դինամիկան:** 1988 թ.-ից մինչև 1999 թ. հունվար ընկած ժամանակահատվածում<sup>6</sup> Հայաստանում գրանցվել է շուրջ 1350 օտարերկրյա ներդրումներով ձեռնարկություն, որի մեծ մասը գրանցվել է վերջին 4 տարիների ընթացքում: Հայաստանի տնտեսության ազատականացումից հետո այնքան էլ մեծ չէր օտարերկրյա ներդրողների հետաքրքրությունը Հայաստանի նկատմամբ: Այսպես, 01.01.1999-ի դրությամբ 1994 թ.-ին գրանցված օտարերկրյա կապիտալով ձեռնարկությունների քանակը 92 է (որից 40-ը օտարերկրյա, իսկ 52-ը համատեղ): 1994 թ.-ից հետո, երբ հաղթահարվեց էներգետիկ ձգնաժամն ու ամրապնդվեց տնտեսական կայունությունը, մեծացավ նաև օտարերկրյա կապիտալով գրանցված ձեռնարկությունների քանակը՝ 1995-ին կազմելով 397 (191-ը օտարերկրյա, 206-ը համատեղ), 1996-ին՝ 685 (305-ը օտարերկրյա, 380-ը համատեղ), 1997-ին՝ 1042 (434-ը օտարերկրյա, 685-ը համատեղ), իսկ 1998-ին՝ 1350 (564-ը օտարերկրյա, 786-ը համատեղ):



**ՕՌԻՆ-ի բաշխվածությունը ըստ երկրների:** Հայաստանում օտարերկրյա կապիտալը ներդրվում է ավելի քան 50 երկրներից: Բայց հիմնականում օտարերկրյա ներդրումներով ընկերությունները ստեղծվել են Ռուսաստանի Դաշնության (ձեռնարկությունների ընդհանուր քանակի 24%-ը), Իրանի (19%), ԱՄՆ-ի (15%), Ֆրանսիայի (4%), Մեծ Բրիտանիայի, Կանադայի, Գերմանիայի և Սիբիրիայի ներդրողների մասնակցությամբ, որտեղ հայկական մեծ համայնքներ կան:

<sup>6</sup> Տե՛ս «Տնտեսական բարեփոխումների առանձնահատկություններին ու փոփոխելու Հայաստանում: 1991-1998 թթ. (վիճակագրական պատկեր)»: ՀՀ վիճակագրության, վերլուծությունների և պետական ռեգիստրի նախարարություն (01.01.1999 թ.):

**ՕՈՒՆ-ի բաշխվածությունն ըստ ճյուղերի:** Հաշվի առնելով օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ ձեռնարկությունների գրանցման դիմամիկայի ընդհանուր պատկերը, այսինքն՝ նրանց բավականին մեծ թիվն ու աճման միտումը, կարող է հարց ծագել, թե ինչու են օտարերկրյա ներդրումները ոչ այդքան մեծ ծավալներ կազմում: Սակայն հարկավոր է հաշվի առնել, որ գրանցված օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ ձեռնարկությունների մեծամասնությունը բավականին փոքր ձեռնարկություններ են, կամ էլ ընդգրկված են առևտրի և սպասարկման ոլորտում: Բազմաթիվ օտարերկրյա ներդրողներ, որոնք Հայաստանում գրանցված են որպես մասնավոր ընկերություններ, օտարերկրյա ընկերությունների ներկայացուցչություններ կամ համատեղ ձեռնարկություններ, ձեռնպահ են մնում ակտիվ գործունեություն ծավալելուց: Նրանք ուսումնասիրում են Հայաստանը, նրա շուկան և ձեռնարկատիրական հնարավորությունները՝ սպասելով բարենպաստ պայմանների: Սակայն արդեն նկատվում է նրանց կողմից տեղական արտադրության և ծառայությունների ոլորտում ներդրումներ կատարելու միտում: Այսպես, 1998 թ.-ին կատարված ընդհանուր ՕՈՒՆ-ի ծավալի 51.6%-ը բաժին է ընկնում արդյունաբերությանը, 40.1%-ը՝ ծառայություններին և միայն 8.3%-ը՝ առևտրին:

Զնայած իրականացվող ներդրումների առումով օտարերկրյա կապիտալով ձեռնարկությունները հիմնականում կենտրոնացված են արդյունաբերության ոլորտում, այնուամենայնիվ քանակային առումով գերիշխում է առևտրի ոլորտը: Համեմատության համար նշենք, որ առևտրի ոլորտում գրանցված ձեռնարկությունները կազմում են 53%, արդյունաբերությունում՝ 13% և հեռահաղորդակցությունում՝ 9%, իսկ մնացած 25%-ը գրանցված է այլ ճյուղերում:

Որպես կանոն, խոշոր օտարերկրյա ներդրողները շահագրգռված են գործունեություն ծավալել և ներդրումներ կատարել այն ճյուղերում, որոնք համարվում են տվյալ երկրի մրցակցային կամ համեմատական առավելություններ կրողներ և մեծ արտահանման պոտենցիալ ունեն: Արդեն օտարերկրյա ներդրողների կողմից մեծ հետաքրքրություն է ցուցաբերվում Հայաստանի տնտեսության այն ոլորտների նկատմամբ, ինչպիսիք են ադամանդի մշակման արդյունաբերությունը, ինժեռնաճյուղի տեխնոլոգիաների և էլեկտրոնային կոմպոզիտային արդյունաբերությունը, զբոսաշրջիկությունը, սննդի արդյունաբերությունը, հանքարդյունաբերությունը, հեռահաղորդակցությունը: Իսկայես, դրանք այն ճյուղերից են, որոնք ըստ կառավարության նախնական ընտրության<sup>7</sup>, համարվում են Հայաստանի հիմնական մրցակցային առավելություն կրող ճյուղերը:

**ՕՈՒՆ-ի բաշխվածությունն ըստ սեգմենտների:** Հայաստանում գործող օտարերկրյա ներդրողներին կարելի է հիմնականում բաժանել երեք սեգմենտների: Առաջին խումբը սփյուռքահայերն են և նրանց միությունները, երկրորդը՝ երկրի բարձրաստիճան քաղաքական և գործարար ազդեցիկ շրջանների հետ կապված անձինք, իսկ երրորդ խումբը բազմազգ ընկերությունների (MNC) մասնաճյուղերն են, որոնք հաճախ են օգտվում միջազգային ճանաչում գտած իրենց առևտրային անվանումներից: Որոշ ձեռնարկություններ միաժամանակ պատկանում են վերոհիշյալ կատեգորիաներից երկուսին կամ երեքին: Հայաստանում ակտիվ գործող ներդրողների մոտ մեկ երրորդը պատկանում է այս սեգմենտներից որևէ մեկին: Գոյություն ունի ներդրողների մի կատեգորիա ևս (այսպես կոչված՝ «ազատ նավարկողներ», այսինքն՝ միջին մակարդակի գործարարներ), որոնք Հայաստան են եկել՝ չունենալով որոշակի կապեր կամ ծանոթություններ: Իսկ ինչ վերաբերում է անդրազգային ընկերություններին, ապա նրանցից մի քանիսը, ինչպես օրինակ Bristol Myers Squibb, Castel, Coca-Cola, Caritas, DaimlerChrysler, First Dynasty Mines, HSBC, Huntsman, IBM, Italtel, KPMG, Macmillan, Marriott International, Pernod Ricard, Siemens և մի շարք այլ ընկերություններ, արդեն սկսել են իրենց գործունեությունը Հայաստանում:


Հաշվի առնելով ներդրումների հետ կապված միտումները համաշխարհային տնտեսության կտրվածքով՝ պետք է նշել, որ սփյուռք ունեցող երկրներն ունեն որոշակի առավելություններ և հաջողության են հասնում օտարերկրյա ներդրումների ներգրավման գործում: «Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումներին խոչընդոտող գործոնների ուսումնասիրություն» ծրագրի հետազոտությունը նույնպես հաստատեց այս դրույթը Հայաստանի

<sup>7</sup> St'u Export Promotion and Development joint project of MIT/ITC/UNDP/ADA.


համար: Գրանցված ընկերությունների քանակային գումարի և տվյալ երկրում հաստատված սփյուռքահայության թվաքանակի միջև տարված կորելյացիան անչափ էական է: Բացի այդ, անհրաժեշտ է նշել, որ արդեն առկա են գործող սփյուռքահայ ներդրողներ, որոնք հաջող գործունեություն են ծավալել Հայաստանում: Համաձայն փորձագետների գնահատականների՝ ՕՌԽ-ի ընդհանուր ծավալի մեջ սփյուռքի ներդրումները կազմում են մոտ 50%-ը: Ավելին, վերլուծության ենթարկված փորձագետների 77.7%-ը դիտարկում է հայկական սփյուռքը որպես հետագա մի քանի տարիների համար ներդրումների իրականացման գլխավոր աղբյուր (համեմատության համար նշենք, որ փորձագետների 66.4%-ը այդ մոտեցումը ճիշտ է համարում օտարերկրյա՝ ոչ սփյուռքի ներդրումների համար, 65.1%-ը՝ բազմազգ ընկերությունների կողմից կատարվելիք ներդրումների համար, իսկ 63.4%-ը՝ տեղական ներդրումների համար): Չնայած կորելյացիոն գործակիցը սփյուռքահայ համայնքի մեծության և այդ երկրներից արված ներդրումների միջև բավականին բարձր է, այնուամենայնիվ Հայաստանի տնտեսությունում սփյուռքահայության ներդրած գումարները չունեն սպասված ծավալը: Բացի այդ սփյուռքահայության մասնակցությունն ընկալվում է ոչ միայն նրանց կողմից իրականացվող ներդրումների ձևով, այլև արտերկրի շուկաներին նրանց հասանելիության, օտարերկրյա գործարար համայնքի հետ կապերի, ինչպես նաև նուստիտի և մասնագիտական գիտելիքների ու հմտությունների ձևով: Ահա թե ինչու անհրաժեշտ է որոշակի քայլեր ձեռնարկել՝ ներգրավելու սփյուռքի միջոցները Հայաստանի տնտեսության զարգացման գործում:

**Օտարերկրյա ներդրողների կողմից նախընտրելի ներդրումների ձևերը:** Միջին օտարերկրյա բաժնեմասը օտարերկրյա կապիտալով ձեռնարկություններում (որոնք ներառում են թե՛ 100% օտարերկրյա սեփականությամբ ձեռնարկությունները և թե՛ համատեղ ձեռնարկությունները) Հայաստանում կազմում է 73.1%<sup>8</sup>: Ընդ որում վերլուծության ենթարկված գործող ներդրողների 45%-ի մոտ օտարերկրյա կապիտալի մասնաբաժինը տատանվում է 91%-ից մինչև 100%, իսկ 50,1%-ը համատեղ ձեռնարկություններ են (տե՛ս գրաֆիկ 8): Հարցման ենթարկված պոտենցիալ ներդրողների մոտ 50%-ը նախընտրում է ներդրումների «կանաչ դաշտ» ձևը, որն իրենից ներկայացնում է ամբողջությամբ նոր՝ բիզնես: Միաժամանակ, նրանց 41.7%-ը փորձում է հիմնադրել տեղական գործարարների հետ համատեղ ձեռնարկություններ: Շատ քչերն են հետաքրքրված միաձուլումներով (6%) կամ ֆինանսական միջոցների և անշարժ գույքի ձեռքբերմամբ (6%): Պոտենցիալ ներդրողների միայն 14%-ն է, որ կցանկանար օգտվել սեփականաշնորհման ծրագրի ընձեռած հնարավորություններից (տե՛ս գրաֆիկ 9): Ներդրումների նախապատվությունը «կանաչ դաշտի» նկատմամբ կարող է ունենալ երկու բացատրություն: Նախ՝ հնարավոր է դառնում ձևավորել գործարարության նոր տեսակներ՝ ունենալով շուկայական տնտեսության համար «բնորոշ» նոու-հաուի բոլոր յուրահատկությունները: Երկրորդ՝ հնարավոր է դառնում կիրառել նոր զարգացող տնտեսությունների փորձը (ինչպես, օրինակ, Չինաստանի, որտեղ գործարարության նոր տեսակների մեծամասնությունը գործում է արդյունաբերության հին ոլորտներից դուրս): Վերջինս հնարավորություն կտա խուսափել հնաճ կառավարիչների դիմադրությունից՝ ներառյալ նրանց արտադրական սովորույթները և նորը սովորելու ցանկության բացակայությունը, ինչպես նաև կոռուպցիոն կառույցներից (եթե այդպիսիք կան):

**Գրաֆիկ 8.** Ընտրանքի բաշխվածությունը ըստ կանոնադիր կապիտալում օտարերկրյա մասնակցության չափի



**Գրաֆիկ 9.** Պոտենցիալ ներդրողների կողմից նախընտրելի ներդրումների ձևը



<sup>8</sup> Համաձայն «Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումներին խոչընդոտող գործոնների ուսումնասիրություն» ծրագրի ուսումնասիրության արդյունքների:

**Սեփականաշնորհումը և ՕՈՒՆ-ը:** Մոտ 1000 ձեռնարկությունների 1998 թ.-ի սեփականաշնորհման ծրագիրը ներառում է իր մեջ պոտենցիալ 100 ձեռնարկություն, որոնց սեփականաշնորհմանը հնարավոր է օտարերկրացի ներդրողների մասնակցությունը: Եվ ենթադրվում է, որ նրանց ընդհանուր դոլարային արժեքը նշանակալից գումար կլինի: Չնայած որ անընդմեջ աշխատանքներ են իրականացվում՝ արտասահմանյան ներդրողներին վերդիիշյալ ձեռնարկությունների սեփականաշնորհման մեջ ներգրավելու համար, այնուամենայնիվ ենթադրվում է, որ ներդրողների թիվը փոքր կլինի: Հայտնի է, որ անցումային տնտեսություններում սեփականաշնորհումը չի եղել ՕՈՒՆ-ի ներգրավման համար կարևորագույն գործոն<sup>9</sup>: Այն միայն ապահովում է որոշ խոշոր ձեռնարկությունների մուտքն ու ներկայությունը երկրում և միայն հետագայում՝ բարենպաստ դաշտի առկայության դեպքում, այդ ձեռնարկությունները որոշում են ներդրումներ կատարել: Հայաստանում նույնպես սեփականաշնորհումը չի հանդիսանում ՕՈՒՆ-ի համար կարևորագույն խթան: Վերլուծության ենթարկված գործող ներդրողների միայն 21%-ն է օգտվել սեփականաշնորհման ընծեռած հնարավորություններից: Նրանցից շատերը նախընտրում են իրականացնել «կամաջ դաշտ» ներդրումներ: Նմանապես, պոտենցիալ ներդրողներից միայն 14%-ն է հետաքրքրված սեփականաշնորհման մրցույթներով: Այնուամենայնիվ, սեփականաշնորհումը ապահովել է 1998 թ. Հայաստան եկած ՕՈՒՆ-ի մեծ մասը, և նախատեսվում է, որ այն կարևոր գործոն կլինի նաև հաջորդ մի քանի տարում: Ուստի սեփականաշնորհման գործընթացի բարեհաջող շարունակումը կարևորագույն խնդիր է, և ընդհանուր ներդրումային միջավայրի բարելավմանը զուգահեռ՝ ներդրումային ծրագրերի պատրաստումը եսկան նշանակություն կունենա սեփականաշնորհման գործընթացում ներդրողների ներգրավելու համար:

**ՕՈՒՆ-ի արտահանման ուղղվածությունը:** Հարցման ենթարկված գործող ներդրողների ավելի քան կեսը գրեթե Հայաստանում է իրականացնում իր արտադրանքի և ծառայությունների մարքեթինգային հետազոտությունը: Այսինքն՝ Հայաստանում արվող օտարերկրյա ներդրումները հիմնականում դեռ արտահանման ուղղվածություն չունեն: Չնայած վերը նշվածին՝ որոշ օտարերկրյա ներդրողներ Հայաստանը համարում են արտահանման համար բավական լավ նախադրյալներ ունեցող երկիր: Հայաստանի աշխարհագրական դիրքը, դյուրին մուտքը դեպի ԱՊՀ (հատկապես ԱՊՀ երկրների մասին իմացության և ժառանգված կապերի առումով) և Միջին Արևելքի շուկաները, ինչպես նաև լիբերալ արտահանման ռեժիմը գործող ներդրողների 64.7%-ին վստահություն են ներշնչում՝ Հայաստանը որպես գրավիչ ներդրումային տարածք և դարպաս դեպի այլ շուկաները դիտարկելու համար:

### **ԳՂ-ում ՕՈՒՆ-ի նկատմամբ իրականացվող քաղաքականությունը**

ԳՂ կառավարությունը սկսած 1994 թ.-ից ՕՈՒՆ-ի նկատմամբ, որպես Հայաստանի արդյունաբերության և հանընդհանուր տնտեսական զարգացման գերակայելի ուղղություն, կիրառում է բաց դռների քաղաքականություն: Համաձայն այդ քաղաքականության, Հայաստանում հավասար իրավական չափանիշներ են հաստատված թե՛ օտարերկրյա, և թե՛ ներքին գործարարների համար: Բացի այդ՝ Հայաստանն անդամակցում է Ներդրումային վեճերի միջազգային համաձայնագրին և Ներդրումային վեճերի լուծման միջազգային կենտրոնին: Հայաստանը ներդրումների և ներդրողների պաշտպանության վերաբերյալ երկկողմ համաձայնագիր է ստորագրել նաև 16 երկրների հետ, իսկ 32 այլ համաձայնագրեր բանակցությունների ընթացքում են:

Օտարերկրյա ներդրումների մասին օրենքով ԳՂ կառավարությունը շեշտում է ՕՈՒՆ-ի խթանիչ դերը տնտեսության աճի և զբաղվածության բնագավառում և միջոցներ է ձեռնարկում ՕՈՒՆ-ի տնտեսական օգուտների իրականացման համար: Հայաստանում ներդրումների բնագավառում նշված օրենքով սահմանված քաղաքականության իրականացման համար պատասխանատու են հետևյալ հաստատությունները՝ 1. **Ներդրումների խթանման և պաշտպանության պետական խորհուրդը** (ստեղծվել է ԳՂ նախագահի հրամանագրով՝ Հայաստանում օտարերկրյա ներդրումների խթանումը և պաշտպանությունը ապահովելու նպատակով, գլխավորում է վարչապետը: Խորհուրդը ԳՂ նախագահին և կառավարությանը

<sup>9</sup> St'u Charles-Albert Michalek «Strategies of Multinationals and Competition for Foreign Direct Investment: The Opening of Central and Eastern Europe», Washington, DC, USA: The World Bank, 1997, p. 17:

խորհրդատվություն է տրամադրում այն միջոցների վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են մըր-  
ցակցային դաշտ ստեղծելու համար, ինչը կնպաստի ներդրումների ներհոսքին և կապահո-  
վի դրանց բավարար պաշտպանությունը), 2. Արդյունաբերության և առևտրի նախարարու-  
թյան ներդրումների գլխավոր վարչությունը (մշակում է ներդրումների ոլորտում պետական  
քաղաքականությունը, որն ուղղված է բարենպաստ միջավայրի ձևավորմանը և զարգաց-  
մանը, վերջինիս շարունակական դիտանցմանը և բարելավմանը, ինչպես նաև կորորհնաց-  
նում է ներդրումային ծրագրերը), 3. Զարգացման հայկական գործակալությունը (հիմնվել է  
խորհուրդի կողմից, գործում է որպես «մեկ կանգամի կենտրոն» ներդրողների ու արտահա-  
նողների համար և Հայաստանը ներկայացնում գրավիչ տնտեսություն ներդրումների իրա-  
կանացման համար): Նախատեսվում է, որ ԶՀԳ կունենա ներկայացուցչությունների և գոր-  
ծակալությունների լայն ցանց Հայաստանի համար հեռանկարային արտասահմանյան շու-  
կաներում: Բացի այդ, Միացյալ Թագավորությունում հայկական սփյուռքի և միջազգային  
գործարար համայնքի լայնամասշտաբ մասնակցությամբ և աջակցությամբ հիմնադրվել է  
Ներդրումների և առևտրի զարգացման հայկական գործակալությունը: ԱՄՆ-ում Հայաստա-  
նի դեսպանատունը և սփյուռքը համատեղ ուժերով ստեղծել են ԱՄՆ - Հայաստան բիզնես  
խորհուրդը և ԱՄՆ - Հայաստան ներդրումային ընկերությունը, որոնք երկուսն էլ տարածում  
են տեղեկատվություն ու աջակցություն պոտենցիալ և գործող ներդրողներին:

Համաձայն «Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումներին խոչընդոտող գոր-  
ծոնների ուսումնասիրություն» ծրագրի արդյունքների՝ պետական պաշտոնյաների և մեծա-  
թիվ ոչ կառավարական փորձագետների գնահատականով բարձրաստիճան պետական  
պաշտոնյաները բավականաչափ բարյացակամ են օտարերկրյա ներդրումների նկատմամբ:  
Բարձրաստիճան պետական պաշտոնյաների կողմից օտարերկրյա ներդրումների ներգրա-  
վումը խթանելու, նրանց մուտքը դյուրացնելու ունակությունը փորձագետները բավականին  
բարձր են գնահատում: Միևնույն ժամանակ, պոտենցիալ ներդրողների 59%-ը նշել է բարձ-  
րաստիճան պետական պաշտոնյաների բարյացակամ վերաբերմունքը և կարևորել նրանց  
ներգրավվածությունը՝ բնորոշելով այն որպես բարենպաստ և խրախուսիչ գործոն (նույնիսկ  
երաշխիքային սխեմաների բացակայության պայմաններում):

### ՀՀ ներդրումային միջավայրի ընդհանուր գնահատումը

ՕՈՒՆ-ի ներհոսքը ցանկացած երկիր որոշվում է տվյալ երկրի ներդրումային միջավայ-  
րով: Այն իր որոշակի ազդեցությունն է ունենում նաև ներդրումների արդյունավետության  
վրա: ՀՀ ներդրումային միջավայրի գնահատման նպատակով վերջերս իրականացվեց «Հա-  
յաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումներին խոչընդոտող գործոնների ուսումնասի-  
րություն» ծրագիրը: Այն վերջին երկու տարվա կտրվածքով Հայաստանի ներդրումային մի-  
ջավայրի համեմատական վերլուծությունն է և հիմնված է ներդրումների ոլորտը կարգավո-  
րող իրավական դաշտի ուսումնասիրության և հետևյալ երեք խմբերի հարցման արդյունք-  
ների վրա. 1. Հայաստանում գործող ներդրողներ, 2. պոտենցիալ ներդրողներ, 3. փորձա-  
գետներ (բարձրաստիճան և միջին օղակի պետական պաշտոնյաներ, մասնավոր ոլորտի  
անկախ փորձագետներ, Հայաստանում գտնվող դեսպանատներ, միջազգային կազմակեր-  
պություններ): Ուսումնասիրության նպատակն էր հիմնախնդիրների հայտնաբերումը և  
նպատակաուղղված միջոցառումների իրականացումը ներդրումային միջավայրի բարելավ-  
ման համար:

Համաձայն ծրագրի արդյունքների՝ միջավայրը դարձել է ավելի կանխատեսելի ու թա-  
փանցիկ, և ներդրողների մոտ 90%-ը վստահ է իրենց ապագա ներդրումային ծրագրերի և  
ֆինանսական բարգավաճման նկատմամբ, ընդ որում՝ ներդրումային միջավայրի ներկա վի-  
ճակը և զարգացման միտումները գնահատվում են «հուսադրող»: Այնուամենայնիվ, համե-  
մատված այն երկրների հետ, որոնք հաջողության են հասել օտարերկրյա ուղղակի ներդրում-  
ների մեծ ծավալների ներգրավման գործում, Հայաստանը դեռևս ուժեղ մրցակից չէ այս ո-  
լորտում: Սակայն, հիմնվելով ուսումնասիրության արդյունքում բացահայտված միտումնե-  
րի վրա, կարելի է ասել, որ Հայաստանը քայլեր է կատարում միջազգային մրցունակության  
բարձրացման ուղղությամբ:

**Ներդրումային միջավայրի առավելությունները:** Գործող ներդրողները նշել են, որ առ-  
կա են մի շարք առավելություններ, որոնք նպաստել են ներդրողների Հայաստան մուտք

գործելուն և վերջիններիս ծրագրերի իրագործմանը, ինչպես նաև քաջալերել են մեծամասնությանը՝ ծրագրել իրենց ներդրումների ծավալների հետագա ավելացում: Իրականում այս առավելություններն այնքան հուսադրող են, որ նրանց 96.6%-ը կառաջարկեր պոտենցիալ ներդրողների ներդրումներ կատարել Հայաստանում: Գործող ներդրողների կողմից նշված խոշոր առավելությունների շարքում են՝ հանրային վերաբերմունքը օտարերկրյա ներդրումների նկատմամբ, աշխատուժի արժեքը և որակավորումը: Փորձագետները նույնպես Հայաստանյան գործարար միջավայրի համար որպես մեծ առավելություններ են բնորոշել աշխատուժի արժեքն ու որակավորման գործոնները, ինչպես նաև՝ շահույթի հայրենադարձումը և ընդհանուր մակրոտնտեսական վիճակը (որոնք գործող ներդրողների մեծամասնությունը չի բնորոշել որպես թերություն):

Ուսումնասիրության ընթացքում հարցվողներին առաջարկվել էր գնահատել իրավական կարգավորմանն առնչվող գործոնները երեք կտրվածքով՝ Հայաստանն այսօր, նախորդ երկու տարվա ընթացքում և համեմատած ԱՊՀ այլ երկրների հետ: Յուրաքանչյուր ոլորտում ներկայիս ռեժիմը գործող ներդրողները գնահատել են լավ կամ ավելի բարենպաստ, քան նույնը երկու տարի առաջ: Առավել մեծ առաջընթաց է նշվել հետևյալ երկու ոլորտներում՝ «օտարերկրյա ներդրումների իրավական ռեժիմի» և «Հայաստանի քաղաքականության և օրենսդրական փոփոխությունների կանխատեսելիության»: Բացի այդ, յուրաքանչյուր առանձին ոլորտում Հայաստանը հարաբերականորեն ավելի բարձր է գնահատվել, քան ԱՊՀ այլ երկրները:

**Ներդրումային միջավայրի թերությունները:** Գործող ներդրողների հարցումը օգնեց բացահայտել մի շարք հիմնահարցեր, որոնք հրատապ լուծման կարիք են զգում: Ինչպես այլ երկրներում, այնպես էլ Հայաստանում փոքր և միջին ներդրումների մուտքը տեղական շուկա ավելի դժվար և ծախսատար է, քան մեծածավալ ներդրումների համար: Հարցված գործող ներդրողներից մոտավորապես կեսի համար հայկական շուկա մուտք գործելուն, ձեռնարկությունների ստեղծմանը և գործունեություն ծավալելուն նպաստել են իրենց ֆիրմային անվանման ճանաչվածությունը, սփյուռքի հետ ունեցած կապերը և պետական պաշտոնյաների բարյացակամ վերաբերմունքը ներդրողների և ներդրումների նկատմամբ:

ՕՈՒՆ-ը խոչընդոտող գործոններից են կաշառակերությունը և բյուրոկրատական քաշքշուկները: Գործող ներդրողների 78.2%-ը բյուրոկրատական քաշքշուկը համարում է Հայաստանում ձեռներեցության գործունեությունն արգելակող հիմնական գործոն: Փորձագետների և գործող ներդրողների կարծիքները այս հարցի շուրջ ամբողջությամբ համընկնում են: Ավելին, պետական պաշտոնյաներն առավել խիստ են այս խնդրում, քան անկախ փորձագետները: Բյուրոկրատական քաշքշուկը գնահատվել է ժամանակի այն մասի չափով, որը ներկայումս գործող ներդրողները ստիպված են ծախսելու պետական պաշտոնյաների հետ բանակցելիս: Ստացված թվերը խոսում են Հայաստանում բյուրոկրատական քաշքշուկի հետ կապված վիճակի վատացման մասին: Երկու տարվա ընթացքում ձեռնարկությունների տեսակարար կշիռը, որոնց կառավարիչները պետական պաշտոնյաների հետ բանակցելիս ծախսում են իրենց ժամանակի 15%-ից ավելին, աճել է 42.8%-ից մինչև 66.7% (ՕԵԿԸ-ի երկրներում՝ 10%<sup>10</sup>, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում՝ 31%, իսկ ԱՊՀ երկրներում՝ 52%):


Առավել հաճախ նշվող թերությունները վերաբերում են ֆիզիկական (երկաթուղային և ճանապարհային) ենթակառուցվածքին, մաքսային և հարկային օրենսդրությանն ու վարչարարությանը, ձեռնարկությունների գրանցմանն ու լիցենզավորմանը, վիզաների ընթացակարգերին, ներդրումների մինչ- և հետ- աջակցման հաստատությունների գործունեությանը (ինչպես կառավարության կառուցվածքում գործող, այնպես էլ մասնավոր):

**Ներդրումային միջավայրի չեզոք գործոնները:** Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ ՀՀ ներդրումային միջավայրը բնութագրող շատ գործոններ ո՛չ առավելություններ են և ո՛չ էլ թերություններ: Դրանք, այսպես կոչված, «չեզոք» գործոնների շարքում են՝ շրջափակումը, բնական ռեսուրսների առկայությունը, շուկայի չափը, հասանելիությունը հողի/մանշարժ գույքին, արտարժույթային կարգավորումը, սոցիալական միջավայրը, տնտեսական վեճերի լուծումը, բիզնես գործ-

<sup>10</sup> Տե՛ս World Development Report, 1997. The State of Changing World. IBRD/WB. 1997. Oxford University Press, Inc. էջ 43-44:



**Գրաֆիկ 10.** Տարածաշրջանային աշխարհագրա-  
քական անկայունությունը լուրջ խնդիրներ է  
ստեղծում գործարարության համար



Ներդրողների Դայաստանի ներկայիս ներքին քաղաքական իրավիճակը ներդրումների պաշտպանության համար նպաստավոր է (գործող ներդրողների 51.5%-ը համաձայն է, 12.1%-ը՝ ավելի քան համաձայն): Պոտենցիալ ներդրողների 36.7%-ը կարծում է, որ ներքա-  
ղաքական իրավիճակը կարող է հետագայում խնդիրներ ստեղծել իրենց համար, և փորձա-  
գետների 57%-ը ենթադրում է, որ ներքին քաղաքական իրավիճակը չի նպաստում ներդ-  
րումների պաշտպանությանը: Գոյություն ունեն տարբեր մոտեցումներ այն խնդրին, թե «ար-  
դյո՞ք Կովկասյան տարածաշրջանի աշխարհաքաղաքական անկայունությունը լուրջ պրոբ-  
լեմներ է ստեղծում գործարարության համար»: Այսպիսով այն մտահոգում է գործող ներդ-  
րողների 27%-ին: Կառավարական փորձագետների 70%-ը, ոչ կառավարական փորձագետ-  
ների 50%-ը և պոտենցիալ ներդրողների 41%-ը կարծում են, որ այն լուրջ խնդիր կարող է  
լինել գործարարության համար (տե՛ս գրաֆիկ 10):

**Ներդրումային միջավայրի գնահատման տարբերությունը հարցման ենթարկված տար-  
բեր խմբերի շրջանում:** Ուսումնասիրությունն է հայտ բերեց գործող ներդրողների և փորձա-  
գետների կարծիքների միջև եղած տարբերությունը: Ենթադրվում է, որ անբավարար տեղե-  
կատվության և վերլուծությունների բացակայության պատճառով փորձագետները չունեն  
առկա իրադրության հստակ պատկերացում: Փորձագետները թերագնահատում են ներկա-  
յիս դրական միտումները և այն խոչընդոտները, որոնք պոտենցիալ ներդրողների կողմից  
նշվում են որպես ներդրումները խափանող հիմնական գործոններ (օր. կաշառակերություն-  
ը, վարչակազմ, հարկային և ոստիկանության չարաշահումները, մաքսատները և ապրանք-  
ների առաքման ռիսկը), և միևնույն ժամանակ գերագնահատում են այլ հիմնախնդիրները,  
որոնք ներդրողների կողմից չեն նշվում որպես հիմնական խոչընդոտներ: Այստեղից եզրա-  
հանգում ենք, որ մինչև սույն վերլուծությունը գոյություն ունեցող զգալի տեղեկատվական  
բաց Դայաստանի ներդրումային միջավայրի վերաբերյալ:

Գոյություն ունի նաև տարբերություն գործող և պոտենցիալ ներդրողների կարծիքների  
միջև: Դայաստանի ներդրումային միջավայրի գրավչության վերաբերյալ պոտենցիալ ներդ-  
րողների ընդհանուր կարծիքն ավելի մոտ է փորձագետների կարծիքին, բայց հաճախ տար-  
բեր են մտահոգություն առաջացնող գործոնները: Պոտենցիալ ներդրողները նշում են այնպի-  
սի հիմնախնդիրներ, որոնք գործող ներդրողներն ընդունում են որպես անխուսափելի ռիսկեր  
կամ դրանք լուծել են ինչ-ինչ ճանապարհներով: Ի լրումն, թվում է, թե պոտենցիալ ներդրող-  
ների կարծիքի ձևավորման վրա որոշակի չափով ազդում է փորձագետների կարծիքը, որն ա-  
վելի բացասական է, քան գործող ներդրողներինը: Նշված գործոններից է նաև տարածաշրջա-  
նային և ներքին իրավիճակը: Մասնավորապես որ ճգնաժամային տարիներին Դայաստանի մասին  
ձևավորված բացասական վարկանիշը դեռ գոյություն ունի, իսկ այն փաստը, որ Դայաստանի  
ներդրումային միջավայրի մասին գործող ներդրողների կարծիքը՝ որպես ԱՊՀ երկրների մեջ  
լավագույններից մեկը, չեն կիսում պոտենցիալ ներդրողները, ցույց է տալիս, որ դեռ կան նշա-  
նակալից տեղեկատվական խոչընդոտներ և իրական հիմնախնդիրներ, որոնք Դայաստանը  
պետք է լուծի պոտենցիալ ներդրողների համար ավելի գրավիչ դառնալու նպատակով:

**ԳՂ ներդրումային միջավայրի բարեփոխման առաջնային միջոցառումները**

Համաձայն «Դայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումներին խոչընդոտող գոր-  
ծոնների ուսումնասիրություն» ծրագրի՝ արդյունքների՝ որպես առաջնային միջոցառումներ  
պետք է համարվեն հետևյալները՝

## **Բարեփոխումներ վարչարարությունում**

*Հարկային և մաքսային վարչարարության կատարելագործում:* Քանի որ ներդրողների կողմից առավել հաճախ բարձրացվող հիմնախնդիրներից են հարկային և մաքսային վարչարարության ոլորտի խոչընդոտները, և որ բարեփոխումները ոլորտում արդեն իսկ գերակայելի խնդիրներ են կառավարության համար, ուստի հրատապ է դառնում դրանց կատարելագործման համար անհրաժեշտ միջոցառումների մշակումն ու իրականացումը:

*Հստակեցում գրանցման ու լիցենզավորման ընթացակարգում:* Որպեսզի ներդրողները կարողանան հնարավորին կարճ ժամկետում առանց բյուրոկրատական քաշքշուկների ձեռնարկություն գրանցել, անհրաժեշտ է ձեռնարկության գրանցման ժամկետների կարճացման հետ զուգահեռ հստակեցնել նաև գրանցման ու լիցենզավորման ընթացակարգերը:

*Բարեփոխումներ վիզաների և բնակության թույլտվությունների կամոնակարգերում:* Զնայած ՀՀ-ն ունի ընդհանուր առմամբ ազատական ներգաղթի քաղաքականություն և օրենսդրություն, այնուամենայնիվ, վիզաների հետ կապված հարցերում առաջացող որոշակի տեխնիկական խնդիրները թույլ են տալիս եզրակացնել, որ պետք է բարեփոխումներ իրականացնել օտարերկրյա ներդրողներին, պոտենցիալ ներդրողներին և նրանց ներկայացուցիչներին վիզաների և բնակության թույլտվությունների տրման կանոնակարգերում:

*Բարեփոխումներ պետական ծառայության համակարգում:* Ներդրումներին, մասնավորապես ՕՌԻԼ-ին խոչընդոտող մյուս խոշոր գործոններից են կաշառակերությունը և բյուրոկրատական քաշքշուկները: Ընդ որում, գործող ներդրողները, ինչպես նաև փորձագետները բյուրոկրատական քաշքշուկը համարում են Հայաստանում ձեռներեցության գործունեությանը արգելակող հիմնական գործոն: Այդ իսկ առումով պետական ծառայության համակարգում բարեփոխումների իրականացումը կարող է եպես նպաստել ներդրումների խրախուսման գործընթացին:

## **Օրենսդրական բարեփոխումներ**

Իրավական և վարչական բարեփոխումների գործընթացի արդյունքում պետք է հստակեցվի Հայաստանի առևտրային ու առևտրական օրենսդրությունը և հեշտացվի-պարզեցվի այդ օրենսդրության կիրառման մեխանիզմները: Մասնավորապես, անհրաժեշտ է մշակել մի շարք նոր օրենքներ, ինչպիսիք են, օրինակ, ներդրումների մասին օրենքը (ներկայումս կիրառվող օտարերկրյա ներդրումների մասին օրենքի հիման վրա մշակված), հակամենաշնորհային - ազատ մրցակցության մասին օրենքը, կոնցեսիաների մասին օրենքը: Հարկավոր է նաև վերանայել հողի վարձակալության հետ կապված օրենսդրությունը, և կատարել մի շարք այլ օրենսդրական բարեփոխումներ:

## **Ֆիզիկական ենթակառուցվածքի բարելավում**

Զարգացած ֆիզիկական ենթակառուցվածքը կարևոր դեր են խաղում ներդրումների խթանման ու զարգացման մեջ և մեծ կարևորություն ունեն ներկա փուլում ՀՀ տնտեսության զարգացման համար: ՀՀ կառավարությունը այժմ ներգրավված է մի շարք վարկային և ներդրումային ծրագրերում՝ նպատակ ունենալով բարելավել և զարգացնել ճանապարհների, ոռոգման, խմելու ջրի մատակարարման, ավիաուղիների, հյուրանոցային ծառայությունների և հեռուստահաղորդակցության ենթակառուցվածքները:

## **Ներդրումների խթանման և ներդրումային ծառայությունների բարելավում**

Ներդրումների խթանման, ինչպես նաև բարձրորակ ներդրումային ծառայությունների տրամադրման համար մեծ կարևորություն և անհրաժեշտություն է ստանում ներդրումային գործակալությունների, մասնավորապես Զարգացման հայկական գործակալության (ԶՀԳ) հզորացումն ու «մեկ կանգառի կենտրոն» ֆունկցիայի ամրապնդումը:

Կարևորվում են նաև արտերկրում Հայաստանի դեսպանատները, որոնք օտարերկրյա ներդրումների ներգրավման համար «հարձակման» առաջին գիծն են համարվում: Պետք է ուշադրություն դարձնել նրանց, որպես ներդրումային խթանման գործակալությունների, ինչպես նաև ՀՀ արտաքին գործերի նախարարության, դերի և ֆունկցիաների կատարելագործման խնդիր: Անհրաժեշտ է, որ արտերկրում մեր դեսպանատները առավել ակտիվորեն տարածեն Հայաստանից ստացվող ընթացիկ տեղեկատվությունը՝ սերտորեն համագոր-

ծակցելով ինչպես ՀՀ նախարարությունների, այնպես էլ ներդրումների խթանման գործակալությունների հետ:

Ներդրումների խրախուսման գործում ավելի մեծ ուշադրություն պետք է դարձվի սփյուռքի դերին և կարողություններին: Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ սփյուռքահայությունը դիտվում է որպես ներդրողների կարևորագույն աղբյուր հետագա մի քանի տարիների համար: Այնուամենայնիվ, սփյուռքահայության կողմից մինչ այժմ իրակա-նացված ներդրումները չեն կատարվել սպասվող ծավալներով: Այդ պատճառով անհրա-ժեշտ է որոշակի քայլեր ձեռնարկել՝ վերոհիշյալ ներդրումների ծավալները բարձրացնելու համար: Մասնավորապես, անհրաժեշտ է հիմնավոր ուսումնասիրել և պարզել սփյուռքահա-յության կարողությունները, այն է, թե ինչ ներդրում կարող է ունենալ վերջինս Հայաստանի տրմտեսության մեջ, և որոնք են նրա՝ սպասվածից նվազ մասնակցության պատճառները: Անհրաժեշտ է նաև մշակել նրանց հետ համագործակցելու հատուկ ծրագրեր: Ամերիկայի հայկական համագումարը, AGBU-ն, ANC-ն և մյուսները պետք է ներգրավվեն ներդրումնե-րի խթանման գործընթացի մեջ: Սփյուռքահայերն ու նրանց միությունները պետք է ապա-հովվեն հիմնավոր տեղեկատվությամբ և ներգրավվեն ներդրողների խթանման ռազմավա-րության կառուցվածքում, որպեսզի գործուն աջակցություն ունենան ներդրումների ներ-գրավման և Հայաստանի ներդրումային վարկանիշի բարձրացման գործընթացում:

**Հետնորդումային աջակցության ծառայությունների և ներդրումների պաշտպանու-թյան** մեխանիզմի կատարելագործման գործընթացն իր նշանակալի ավանդը կունենա ընդ-հանուր ներդրումային միջավայրի բարելավման գործում: Ներկայումս հետնորդումային աջակցության ծառայությունների մակարդակը դիտվում է անբավարար, և դրանց բարելա-վումը կօգնի ներդրողներին զգալ իրենց առավել վստահ՝ դրանով իսկ խթանելով ներդրում-ների իրականացման գործընթացը: Այն հիմնականում կարտահայտվի վերաներդրումների աճի միջոցով, որն անչափ կարևոր է՝ հաշվի առնելով երկրի ընդհանուր վարկանիշի ձև-վորման հետ կապված հսկայական ծախսերը: Ավելին, ներկայիս գործող ներդրողները տե-ղեկատվության ամենավստահելի աղբյուրն են ցանկացած պոտենցիալ ներդրողի համար: Բացի այդ, որևէ երկրում գործունեություն ծավալած այն ներդրողները, որոնք բավարար-ված են իրենց գործունեության արդյունքներից, տվյալ երկրում ներդրումներ կատարելու ա-մենավաճ ջատագովն են:

Այսպիսով, մեխանիզմների բացակայության կամ թերի լինելու պատճառով ներդրում-ները կարգավորող բավականին ազատական օրենսդրությունը չի կիրառվում ամբողջու-թյամբ, և, արդյունքում, դեռ չի ստեղծվել այն բարենպաստ և մրցունակ ներդրումային մի-ջավայրը, որը հարկավոր է տնտեսության արագ վերականգնմանն անհրաժեշտ օտարերկ-րյա ներդրումների ծավալների ներգրավման համար: Առավել թափանցիկ և կառավարելի կանոնակարգերի ու ընթացակարգերի կիրառումը, ինչպես նաև արդյունավետ ծառայու-թյուններ մատուցելու նպատակով պաշտոնյաների վերապատրաստումը կնպաստեն նշված կառույցների գործունեության բարելավմանը, բյուրոկրատական քաշքշուկների, չարաշա-հումների և կաշառակերության նվազեցմանը:

Զնայած Հայաստանում ՕՌԻ-ի ներհուսքը, համեմատած անցման շրջանի այլ երկրնե-րի հետ, բավականին փոքր թիվ է կազմում, և հիմնախնդիրները ներդրումների համար դեռ գոյություն ունեն, այնուամենայնիվ ՕՌԻ-ի ծավալները աճում են, և ներդրումային միջա-վայրը բարելավվում է: Գրեթե բոլոր գործող ներդրումներն ունեն հստակ ծրագրեր Հայաս-տանում իրենց գործունեությունն ընդլայնելու ուղղությամբ, իսկ պոտենցիալ ներդրողների 70%-ը նպատակ ունի զգալի ներդրումներ կատարելու հաջորդ երկու-երեք տարիների ըն-թացքում: Օտարերկրյա նոր ներդրումներ ներգրավելու նպատակով ՀՀ կառավարությունը պետք է միջոցառումներ ձեռնարկի ներդրումներին խոչընդոտող գործոնների վերացման համար, մասնավորապես լուծումներ մշակի և իրականացնի, ինչպես նաև շարունակի բա-րելավել երկրի ներդրումային միջավայրը:

Հայաստանի կառավարությունն իր կողմից իրականացվող քաղաքականության մեջ պետք է շեշտադրի այն կետերը, որոնց միջոցով կապահովվի կայուն մակրոտնտեսական հավասարակշռություն, խոհեմ ֆինկալ համակարգ, զարգացած ֆինանսական համակարգ, ռեզիդնալ ինտեգրացում և շուկայական տնտեսությամբ շարունակական աջակցություն:

Փաստորեն համեմատական փորձը ցույց է տալիս, որ վերոհիշյալ գործոնները առավել կարևոր են ներդրումների խթանման համար, քան որևէ այլ նպատակաուղղված գործունեություն: Անհրաժեշտ են նաև որոշակի փոփոխություններ, որոնք իրենց ազդեցությունը կունենան ՕՌԻ-ի ծավալի աճին: Այս փոփոխություններից շատերը նպատակ ունեն բարելավել ընդհանուր միջավայրը բոլոր տեսակի ներդրումների համար, մյուս փոփոխությունների խնդիրը ՕՌԻ-ին առնչվող կոնկրետ պրոբլեմներ լուծելն է:

**С. Е. МАРКОСЯН - Прямые иностранные инвестиции (ПИИ) в экономику РА.-** Статья посвящена прямым иностранным инвестициям (ПИИ) в экономику РА. В ней показывается необходимость ПИИ в экономику РА на данном этапе развития, настоящее положение ПИИ в Армении - объемы инвестиций, динамика регистрации предприятий с участием ПИИ, распределение ПИИ по отраслям, по сегментам, предпочтительные формы инвестиций со стороны иностранных инвесторов, связь с приватизацией и экспортная направленность ПИИ, а также политика относительно ПИИ. Дана оценка инвестиционной среды РА с ее преимуществами, недостатками, нейтральными факторами, приведены также различия в оценке инвестиционной среды, даваемые инвесторами, экспертами и потенциальными инвесторами.

Для привлечения новых Прямых Иностранных Инвестиций правительству РА предлагается предпринять ряд мер для ликвидации факторов, препятствующих инвестициям, в частности, разработку и осуществление комплекса решений, а также продолжение улучшения инвестиционной среды страны. Роль первоначальных мероприятий для улучшения инвестиционной среды должны играть административные, законодательные реформы, улучшение физической инфраструктуры, инвестиционных услуг и механизмов поощрения инвестиций.